

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлис, Редакция «Мелк».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տոհմ օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լիցիւզով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խրատականութեամբ 10 կոպէկով.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՆԻ

Գրիգոր Եսայան, Եղիաթէթ Անգրէսեան, Մարիամ եւ Հեղինէ Դանիէլեան-
ները, Նատալիա Ջուրաբեանց, Մարգարիտ եւ Գրիգորի Կարապէտեանները, Գառնիկ
արտի յայտնում են իրանց ազգականներին եւ ծանօթներին, առաջինները իրանց օրինակ
որդի, միւսները իրանց եղբոր.

ՄԻՔԱՅԵԼ ԴԱՆԻԵԼԵԱՆՆԵՐ

մահվան մասին, որը տեղի է ունեցել Բագուի Հոգեհանգիստ կաթարվելու է կիրա-
կի, գեղատեքերի 2-ին, Ջիգորաշենի ս. Առեւտայ եկեղեցում, առաւօտեան ժամը 11-ին.
1—2

ԲՈՒՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Գրաւիչ ձեռնով. — Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Բնորոշ երեւոյթ. Նամակ Նոր-Բայազէտից.
Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Արտաքին լուրեր. — ՀԵՌԱՅԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱ-
ՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ-
ներ Թուրքիայից:

ԳՐԱԽԻՉ ՁԵՆՈՎ

Եթէ տարի սրանից առաջ Թիֆլիս էր
եկել Պետերբուրգից մի պաշտօնեայ, որ
ամեն կերպ աշխատում էր ընտելացնել մեզ
մի նոր հարկի գաղափարի հետ: Այդ պաշ-
տօնեան Ֆինանսների մինիստրութեան մէջ
Ժառանգ Մենցլովն էր, իսկ հարկը, որ նա
ջատագրում էր, գինու վրա դնելիք
հարկն էր: Նա շատ աշխատեց համոզել,
որ այդ հարկը սահմանելը օգտաւէտ է
մեր գինեգործների համար, բայց չը կա-
րողացաւ համոզել: Նա, ձիւղ է, կազմեց մի
քանի ժողովներ, որտեղ մեծամասնութիւնը
ընդունեց նրա առաջարկը, բայց այդ ժո-
ղովների մեծամասնութիւնը ակցիզային
վարչութեան ծառայողներն էին, որոնք
իրանց պարտաւոր էին զգում համաձայ-
նելու Մենցլովի հետ:

Ինչ վերաբերում է մեր երկրի իսկա-
կան ներկայացուցիչներին, գինեգործներին
եւ գրեզատնտեսներին, նրանք ամենին
հաւանութիւն չը տուին եւ հակաձայնե-
ցին: Իսկ կովկասեան գրեզատնտեսական
ընկերութիւնը ընտրեց մի յատուկ յանձ-
նաժողով այդ խնդիրը քննելու համար եւ
նուիրեց յատուկ նիստեր: Ընկերութեան

նր աջողից համոզիչ փաստերով եւ
խորհրդածութիւններով ապացուցել, որ
գինու վրա դրվելիք հարկը ոչ մի օգուտ
չի տալ տեղական գինեգործութեան, այլ
զգալի ֆինանսներ կը հասցնէ նրան: Այդ
ընկերութիւնը եւ որոշումը ուղարկվեց Ֆի-
նանսների մինիստրութեանը, որը նկատի
առաւ ընկերութեան կարծիքը:
Դիմում հարկի ծրագիրը մինչեւ այժմ
քննած էր: Այժմ նա նորից սկսում է յա-
րութիւն առնել, բայց ուրիշ ձեռով: Նա
պէտք է լինի ոչ պարտադիր, այլ ինքնա-
կամ: Ով կուզենայ՝ կը վճարէ, ով չի ու-
զենայ՝ չի վճարի: Նա այդպիսով այդ հարկը
կը դառնայ մի բոլորովին կամաւոր բան:
Սակայն ինչ հրապարակեց եւ ունենայ
այդ հարկը, որ մարդիկ ինքնակամ կեր-
պով ցանկանան նրան վճարել:

Հարկ առաջարկողները պայման են
դնում, որ այն գինիները, որոնց վրա հարկ
չը լինի դրված, ունենան յատուկ փաթեթ
կամ բանդըր: Այն ժամանակ ամեն մարդ,
որ խանութում կը ցանկանայ գնել գինի,
չի գնի բանդըրը չունեցող գինին, որով
հետեւ վերջինս հետազոտված չէ եւ ուրեմն
կարող է խարդախ լինել, մինչդեռ բանդը-
րով կրողը անկասկած քննված կը լինի եւ
անկեղծ: Այդպիսով հարկ տուողը ապահով
կը լինի, որ նրա գինին բարձր արժէք կու-
նենայ վաճառանոցում եւ պահանջ կը զգա
այդ հարկը մշտապէս վճարելու, որպէս
զի այդ հարկի միջոցով ծածկէ գինու հե-
տազոտութեան վրա եղած ծախքը:

Որքան էլ գրաւիչ ձեռնանայ գինու
վրա հարկը, նա չէ կարող համակրութիւն

եւ ընդունելութիւն գտնել մեզանում: Նա
միայն խոչընդոտ եւ վնասակար կը հանդի-
սանայ մեր գինեգործութեան համար, որի
զարգացումը առանց այն էլ կաշկանդված
է զանազան ձախորդ հանգամանքներից եւ
ազդեցութիւններից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՆՈՐՈՇ ԵՐԵՆՈՅԹ

Ինչպէս եւ պէտք էր սպասել, Հ. Ալիշանի
մահը ցաւ պատճառեց ամեն տեղ: «Մշակ»
մէջ ապովող լուրերը ցոյց են տալիս, թէ Նա-
հայեալը ինքնա մեծ ժողովրդականութիւն
ունէր մեր մէջ: Ժողովուրդը ընդհանուր կա-
զմութեան շնորհիւ ինքն ինքի ժողովուրդը սիրում է
յարգել իր երախտաւորներին: Ուրիշ կերպ չէ
կարող լինել մի ժողովուրդ, Հակոբակ դէպ-
քում դա կը լինէր մի միապետաւոր ապառաժ,
որի վրա ոչ մի բարի գործի սերմ չէր կարող
արմատ բռնել:

Հայ ժողովուրդը կամեցաւ յարգել ընդհա-
նուր հայութեան ցաւերի երգիչ Ալիշանին,
ի՞նչ միջոցներ կային նրա ձեռքում՝ այդ
պարտականութիւնը կատարելու համար: Ի՞նչ
կարող էր անել, օրինակ, մի Գանձակ, մի
Նոր-Բայազէտ: Միայն կարող էր իր եկեղե-
ցում հոգեհանգիստ կատարել տալ հանգուցեա-
լի համար: Բայց հայոց եկեղեցու կազմութե-
անը թոյլ չը տուէր հոգեհանգիստ կատարել:
Հ. Ալիշան կաթողիկէ էր, հետեւեալը նրա հո-
գու համար աղօթելով արգելվում է:

Այս արգելքը նոր բան է: Ապացոյց՝ որ շատ
տեղերում կատարվելիք հոգեհանգիստներ հա-
յոց եկեղեցիների մէջ: Սա ապացոյց է, այն-
չէ, հոգեհոգեհանգիստ համար այնքան
խորթ էր այդ խառնութիւնը, որ շատ տեղե-
րում ոչ ոք չէր անգամ չանցկացրեց, թէ
կարող էր արգելք չէ լինել եկեղեցու մէջ մի
մեծածի համար աղօթելու դէմ:

Հայոց եկեղեցին, անուրանալի է, շատ լայն,
համբերող ոգի է ունեցել: Առաւ եւ՝ «ու-
նեցել է» եւ ոչ թէ ունի, որովհետեւ այդ գե-
ղեցիկ յատկութիւնը նրա անցկացումը պէտք է
պայտել, երբ չը կային նրա այժմեան կա-
զմութեան պաշտպանները: Հայոց եկեղեցին տ-
ղթում էր ընդհանուր քրիստոնեաների հա-
մար, աղօթում էր բոլոր քրիստոնեայ թագա-

ւորների համար, նա չէր մկրտում մի անգամ
մկրտված քրիստոնեային, նորից չէր ձեռնա-
դրում մի օւրիշ եկեղեցում ձեռնադրված հո-
գեհոգեհանգիստ: Նա ընդունում էր բոլոր եկե-
ղեցիները քրիստոնեական եկեղեցի եւ նրա
համար հերետիկոսութիւնը, հերձաւածողու-
թիւնը չունէր այն օտարափելի նշանակութիւ-
նը, ինչպէս, օրինակ, կաթողիկէ եկեղեցու հա-
մար:

Այս հին, լայն առանցքների հիման
վրա էր, որ հայ հոգեհոգեհանգիստ, առանց մի
որ եւ է ժողովուրդի տեսնելու, հոգեհան-
գիստներ էր կատարում կաթողիկէ Աղաթանի,
կաթողիկէ Դիւթիւթի եւ ուրիշ այլադաւանների
համար: Այդ մի եւ նոյն լայն ոգին էր, որ
տարիներ առաջ թոյլ տուեց մի հայ վարդա-
պետի Գանձակի եկեղեցում հոգեհանգիստ
կատարել Նաւազգի Շահի, այսինքն մի մաս-
նագականի համար: Նոյն այդ եկեղեցում այժմ
կաղութները արգելում են հոգեհանգիստ
կատարել մի լաւ, գաղափարական հայ-քրիս-
տոնեայի համար:

Գինեց պատճառով, թէեւ առաւօտեան
չենք, բայց հասկանում ենք քրիստոնեութեան
եւ հայ եկեղեցու ոգին:

Ի՞նչ է հոգեհանգիստը:

Մեանում է մէկը: Եկեղեցին ունի հանգու-
ցալի համար օստիանած յատուկ աղօթքներ,
կարդացեալ այդ աղօթքները, Եկեղեցին դրանց
մէջ մի բան է միայն անում, խնդրում է Առ-
աւօտուն, որ այս ինչ հանգուցեցալի հոգին ար-
ժանացնէ իր օղորտութեան, ներքէ նրա մեղ-
քերը, դժբաժ եւ օղորտած լինի դէպի նրան:

Սեւ առաւ ամեն անգամ, երբ ժողովուրդը մէ-
կը գիտում է քրիստոնեային եւ խնդրում է այդ
հանգեղ կատարել իր այս կամ այն ազգակա-
նի, ծանօթի համար, եկեղեցին կատարում է,
առանց ընկնելու, թէ ով էր եւ ինչ էր այն
մարդը, որի համար նա պիտի աղօթէ: Սե-
ւ շատ հասկանալի է, որ այդպիսի հարց ու
փորձ չը պիտի լինի: Եկեղեցու համար դո-
յութիւն ունի մարմնից բաժանված մի հոգի,
որին սպասում է երկնքի դատաւանը: Ի՞նչ
կը լինի այդ դատաւանը, եկեղեցին չը գիտէ:
Բայց գիտէ, որ եթէ ինքը աղաչէ Առաւօտուն,
այդ աղաչանքը կընդունվի երկնքում: Նա,
ուրեմն, մի բարեխոս է, մի միջնորդ է. նա
երբէք յանձն չէ առնում դատել, թէ այդ հան-
գուցեցալ ինչ է եւ ինչի է արժանի վարձա-

պանել աւերածից:

Վերեւ յիշված Ռեգիստրը երբեք կողմից
չը պաշտպանէ երբեք հոյակապ մզկիթներով
Ոսկեղծ մզկիթ՝ «Բիլլա-Քեմալի» շինութիւնը
թէեւ վերադրում են թէմուրին, բայց յայտնի
է կառուցանողի անունը եւ թիւը՝ 1618 թ.
այդ մզկիթը շինել է Եսայան-Քուլ Բահա-
դուրը:

Ծանկանալով փառահեղութիւնով եւ շքեղու-
թեամբ գերազանցել Լանդ-Քէմալին, Բահա-
դուրը շինութիւնը ներքից եւ դրբից ծած-
կել է օսկով, որը ներկայումս համարեա մաշ-
վել-օրրվել է, եւ միայն տեղ տեղ կարելի է
լինում տեսնել հետքերը: Բեկերներից երեւում
է, որ չափազանց գեղեցիկ էր շինութիւնը:

Մզկիթի երկու կողմից բարձրանում են
թրծած աղիւթներ շինած երկու գեղեցիկ բարձր
մինարէները, որոնք զարմանալի կերպով պահ-
պանվել են մինչեւ օրս: Դրանց աղիւթները
ներկված են արեւելեան ճաշակով եւ ներկը
իր յատկութիւնը ու թարմութիւնը պահել է
զեւ: Մանաւանդ գեղեցիկ կերպով փայլում
են մինարէները, երբ արեւը իր ճառագայթ-
ները գցում է նրանց վրա: Մզկիթը նայում
է դէպի արեւելք: Այս մզկիթի մէջ է եւ
սարթերի համալսարանը՝ գլխաւոր մէջնակէն
Այստեղ՝ փոքրիկ եւ ծով խուցերի մէջ,
գետնի վրա ձգնում են այն հասակաւ առած մի-
րուքաւոր ուսանողները, որոնք ըստ-ըստ
հինգ տարի թւթակի նման սերտելով շու-
րանը, հարկաւոր աղօթքները, օրէնքները,
այժմ անցնում են վերջին սահմանը, որից յե-
տոյ կարող են դառնալ մօլլա, թէպէտ օտո-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ԹՈՒՐԿԵՍԱՆԻԺ

Սամարղանդ պատմական, հոյակաւոր, սքան-
չելի ու գրաւիչ քաղաք: Պատմական է, քրդ-
հետեւ անթիւ, անհամար մեծ պատմական
մնացորդներ են անցել նրա գլխով: Հռչակաւոր է,
որովհետեւ բազմաթիւ աշխարհակալներ, անց-
նելով ամբողջ Ասիան, միշտ իրանց դարձ
կանգնեցրել են այստեղ: Սքանչելի է իր փա-
ռաւոր եւ հոյակապ շինութիւններով ու գրա-
ւիչ իր ժառանգ զով եւ բարեխառն օգուտ:
Ջարմանալի բան, կարծես, ամբողջ Թուրքի-
անում սկսած Կասպեան ծովից մինչեւ Ձի-
նաստան՝ միակ տեղն է, ուր կարելի էր ապ-
րել թէ հին եւ թէ ներկայ ժամանակներում,
այնքան զով է օդը եւ գեղեցիկ ընթերցանը:
Գուցէ միայն Սամարղանդի այս առաւելու-
թիւնն է, որ նա իր առաջին, համարեա, օրից
չարեւմտիկ միացել է մայրաքաղաքի դերում,
չը նայելով, որ իշխողները փոխվում էին:

Սեւ իրար, անքաղ տեսնում ենք, որ Սամար-
ղանդը ծովի մակերեսային 2398 ոտնաչափ
բարձրութեան վրա է գտնվում, ուր ամառվայ
միջին տաքութիւնը հասնում է +23,80, իսկ
ձմեռվայ միջին տաքութիւնը +1,70 *): Ու-
րեմն շատ պարզ է, որ ամեն մի աշխարհակալ,
անցնելով ասիական ցուրտ եւ տաք երկրներ-

բը, ընտրում էր միայն Սամարղանդը իրեն
իր Թիւրանիստ քաղաք: Այդ է պատճառը, որ
Լանդ-Քէմալն էլ 600 տարի առաջ, յայտա-
բարեկող Սամարղանդը իրեն մայրաքաղաք,
զարգացրեց նրան բազմաթիւ շինութիւններով,
որոնք մինչեւ այսօր դեռ զմայլութիւն են
պատճառում նայողին:

Պատմական նկարագրութիւնները ցոյց են
տալիս մեզ, որ Սամարղանդի մէջ շինութիւն-
ների թիւը աւելի մեծ է եղել, քան թէ այժմ:
Սեւ ուսուցներ տիրապետեցին այս երկրներին,
շինութիւնների մեծ մասը ոչնչացել էր արգէն,
մնացածներն էլ կրող չափ աւերակ էին:

Արեւելեան պատմաբանների ցուցմունքը
Սամարղանդի հիմնադրութեան մասին տարբեր
է: Ոմանք այս քաղաքի հիմնադրութիւնը վե-
րագրում են պարսից թագաւոր Բէլքաուսին,
որ ապրել է 3000 տարի Գրիգորից առաջ,
իսկ ոմանք, մտնելով անցքը IV դարին,
Ալեքսանդր Մակեդոնացուն են համարում քա-
ղաքի հիմնադիր: Բայց ժողովրդական աւան-
դութիւնը այդ անցքը տանում է աւելի հին
ժամանակների: Այդ աւանդութիւնը առում է,
որ Սամարղանդի հիմնադիրը եղել է Աքթո-
սիաթ թագաւորը, որ ապրել է 4000 տարի Գ.
առաջ: Ենթադրութիւններից յետոյ իրեն
փառաւ մնում է միայն այն, որ Սամարղանդը
առաջ կոչվում էր Մարաղանդ եւ այդ ա-
նունն առկա նկարագրում է նրան Արրիանոս
պատմաբանը:

Այս Արրիանոսը առում է, որ Ալեքսանդր
Մակեդոնացու ժամանակ Մարաղանդը եղել է
մայրաքաղաք Սոգդիանա երկրի, ուր Ալեք-

*) Справочникъ за 1901 г.

տրութեան թէ դատաւարութեան: Քրեա-
տոնէութեան վեհադոյն յատկութիւններէն
մէկն էլ հէնց այն է, որ նա հոգիների դատա-
տանը թողնում է Աստուծուն, իսկ ինքը միայն
միջնորդ է, միայն խնդրող, եւ այդ դերում
նա ոչ միայն իր բարեկամներէ, այլ եւ իր
թշնամիներէ համար է աղօթում: Խորութիւն
չը կայ: Կասե՞նք աւելին:—Թշնամիների հա-
մար աղօթելու մէջ է երեւում նրա փնտ-
թեան ամենաբարձր աստիճանը:

Բայց մեր կաղաւթները փորձում են այս
վեհ, բարձր սկզբունքի տեղ դնել նեղ աղան-
դաւորական խորութիւն: Նրանք գիտեն, որ
այս ինչ հանգուցեալը կաթօլիկ է եւ չեն թոյլ
առլիս աղօթել նրա համար:

Ինչ իրաւունքով:
Եթէ մեռած մարդու գործերը, դաւանու-
թիւնները պիտի գեր կատարեն նրա համար
աղօթքներ կատարելու գործի մէջ, այն ժամա-
նակ պէտք է հետեւողական լինել: Այն ժա-
մանակ պէտք է նախ քան հոգեհանգիստը մի
շատ մանրամասն քննութիւն կատարել հան-
գուցեայի մասին, դատաստան անել եւ այնու-
հետեւ միայն կամ ընդունել կամ մերժել հո-
գեհանգիստը: Բայց մեր կաղաւթները այս-
պիսի բան չեն անում: Նրանք ձեռի մարդ են:
Այս ինչ հանգուցեալը լուսաւորական եկե-
ղեցու ցուցակներում է նշանակված. նա կարող
է լինել իրապէս կաթօլիկ, բողոքական կամ
նոյն իսկ կաթարեայ անհաւատ, կարող է ե-
կեղեցու անդամ թշնամի լինել:—այս բոլորը
ոչինչ, կաղաւթներ, ձեռի մարդը, փառաւոր
հոգեհանգիստ կը կատարէ, մանաւանդ երբ
լաւ վարձատրութիւն ստանալու յոյս էլ ունի:

Հ. Ալիշանի հոգեհանգիստը չէ կարելի կատա-
րել: Ինչո՞ւ. Գարաբագ՝ կաղաւթները եւ նը-
րանց պաշտպան ասէտ տէրութիւնը այնպէս
են ներկայացնում հարցը, կարծեա, հայոց եկե-
ղեցին կաթօլիկ հոգեհանգիստ կատարելով
որբայցնում է նրան, ընդունում է նրա դաւա-
նութիւնների ճշգրտութիւնը: Բայց դա սուտ է:
Եկեղեցին, կրկնում ենք, միայն աղօթում է
Երեւոյց հեռացող հոգու համար. եւ եկեղեցին
չէ կարող մերժել իր աղօթքը նոյն իսկ ամե-
նազաւթան յանցաւորի, զաղան մարդասպանի
հոգուն անդամ:

Ասում են նմանապէս, թէ հ. Ալիշան հայոց
եկեղեցին անուանել է հերձուածող: Որքան
մեղք ծանօթ ենք հանգուցեայի գրուածքնե-
րին, կարող ենք ասել, որ այդպիսի բան չը
կայ: Ընդհակառակը, մենք օրոտանց կը ցան-
կայինք, որ էջմիածնի վարդապետները եւ մեր
ամենաուղղափառ կաղաւթները այնպիսի օր-
րով, այնպիսի պատկառանքով վերաբերվէին,
զիցուք, ա. Ղազարի վանքին, ինչպէս հ. Ալի-
շան վերաբերվել է էջմիածնին, հայ եկեղեցու
անցեալին ու ներկային: Այդ կողմից Ալիշանը
պէտք է օրինակ համարվէր եւ ոչ թէ ձրի եւ
անմիտ բամբասանքների առարկայ դառնար:
Ալիշանն էր, որ այս տարի յօղեհանի տօներին
ամենայն հայոց Կաթօղիկոսի կենացն էր ա-

րոյթը պահանջում է, որ զէթ մի անգամ էլ
Մէջքս այցելեն:

Լանգ-Թէմուրի Ուլուդ-բէկ անունով թոռը
նոյն Ռեցիտատի վրա կառուցել է մի մզկիթ,
որ այժմ իր անունն է կրում: Այս մզկիթը
մնացածներից աւելի է ենթարկվել ժամանակի
ներգործութեան: Գրեթէ չը կայ, բակի միջի
չինութիւնները քայքայված են: Երեսօթիւնը
առաջինի ոճով է Մզկիթը կառուցված է 1434
թւին, իսկ 1449 թ. կառուցանողը գլուխը
կախված է եղել մզկիթի դուռի պատի վրա,
ապտտամբված Աղբուլ-Լաթիֆ անունով օրդու
հրամանով, իբրեւ յաղթութեան զոհելի նշան:

Ռեցիտատի վրա եղած երրորդ մզկիթն է
«Շիր-Գար» անունովը, որ կառուցված է 1616
թ. եւ որի ճարտարապետութեան ոգին նոյնն
է: Մզկիթը առջեւից ունի երկու մինարէ նոյն-
պիսի չափով, ինչպիսին են վերելում յիշված-
ները: Այս մինարէներից նայողի առաջ բաց-
վում է ամբողջ Սամարղանդը, միայն այն տա-
րբութիւնով, որ նոր քաղաքը ծածկված է
ամբողջովին ծառերով, իսկ հինը կեղտոտ,
տուն ասն վրա կուտված, ծառազուրկ:

Հին Աֆրասիաբ քաղաք աւերակների վրա
տեղաւորված է հնութեան քանդակի մնաց-
վածք՝ «Շահ-Ջանան» մզկիթը, որը աւելի լաւ
է անուանել մի շարք մզկիթներ: Ամենից դար-
մանալին այն է, որ այս շինութեան մէջ ներկ-
ված աղիւսը պահպանել է իր թարմութիւնը,
որ կարծես այսօր ներկայից լինի:—Ոչ ժամա-
նակ, ոչ միջնորդ, ոչ էլ թուրքեօտանի
ամեն ինչ այրող, զոյնից զրկող արեգակը չեն
աղքել աղիւսի ներքի վրա: Այսօր էլ աղիւսը
պսպղում է արեւից, կարծեա, նոր հանած լինի

առջարկում: Թող մեր կաղաւթները ցոյց
առնեն, թէ երբ եւ ինչ ընդունակ կը լինեն այս-
պիսի առաքինութեան:

Մեզ կարող են պատահաբանել, թէ կաթօլիկ
եկեղեցին հոգեհանգիստ չի կատարի լուսաւոր-
չականի համար: Բայց դա պատահաբան չէ:
Եթէ դուք օրինակ էք վերցնում կաթօլիկ ե-
կեղեցուց, այն ժամանակ ինչն է ձեզ արգե-
լում ընդունել եւ ինկվիզիցիա, անսխալակա-
նութիւն եւ այլն: Այն Հայոց եկեղեցին պէտք
է լինի աւելի լայն հայեացքների տէր, աւելի
տոգորված քրիստոնէական իսկական դադա-
փառներով, աւելի ժողովրդական: Մեր եկեղե-
ցու փառքը միմիայն պապիսի յատկութիւն-
ներից կարող է կազմվել: Մեզ ֆանատիկոս
աստուածաբանութիւն չէ հարկաւոր, այլ քրեա-
տոնէութիւն: Տաքը, ձեռք պաշտելով, մենք
մեր եկեղեցին կը խնդրենք, կը քանդենք, իսկ
մաքուր քրիստոնէական սկզբունքները դար-
գացնելով, մենք կենսունակ, ուժեղ կը դարձ-
նենք նրան:

Հ. Ալիշանի հոգեհանգիստի հարցում ամենից
ցաւալին այն է, որ մեր կաղաւթներին հա-
մար հայ լինելը նշանակութիւն չունի. կարելի
է եւ հայ չը լինել, բաւական է լուսաւորչա-
կան լինել:

Ահա ինչ է քարոզչութիւն: Ամեն մէկը կարող
է լաւ ըմբռնել, թէ ուր կերթանք այսպիսի մի
դաւանութեամբ...

Ոչ քրիստոնէութիւն, ոչ հայութիւն, այլ
միայն կաղաւթակա:

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱԾԱԼԵՏԻՑ

Նոյեմբերի 20-ին
Ամսիս 18-ին, պատարագից յետոյ, տեղիս ե-
րիտաւարդութեան նախաձեռնութեամբ Գա-
մառ-Քաթիպայի արձանի բացման առիթով
հոգեհանգիստ կատարվեց: Գարող խօսեց Թով-
մա վարդապետը, պատմելով բանաստեղծի կեն-
սագրութիւնը: Նաեւ ինքնուրոյն ոտանուար
կարդաց պ. Ա. Արքիեպիսկոպիտ, որ լսողների վրա
ուրաւ տպաւորութիւն թողեց:

Մենք, տեղեկանալով «Մշակ»-ից հայր Ղ.
Ալիշանի ծանկան զոյժը, հոգեհանգստի նա-
խորդ օրը գիմեցինք վարդապետին, խնդրելով
Գամառ-Քաթիպայի հոգեհանգստին միացնել
եւ Ալիշանի հոգեհանգիստը, բայց վարդապետը
մերժեց. պատճառը Երեսօթի թեմական առաջ-
նորդի յանդիմանական թուղթն էր, որ կար-
գաց հայր սուրբը մեր խնդրանքով:

«Մշակ» ընթերցողներին յայտնի է, որ յու-
նիսի 10-ին, Նոր-Բայազետում հոգեհանգիստ
կատարվեց դերասան Գ. Աղամեանի տա-
նաւանակի առիթով. այդ բանը տպվեց «Մշակ»
№ 132-ի ներքին լուրերում: Երեսօթի առաջ-
նորդը գրաւոր հարցնում է տեղիս վարդապե-
տին. «Ե՞վ եւ «Մշակ»-ի հաղորդումը հոգե-
հանգստի մասին» եւ դրական պատասխան
ստանալուց յետոյ՝ ուղղորդում է վերայիշեալ
յանդիմանական թուղթը:

Թրճարանից ու նոր ներկված: Երեսօթիւնից
երեւում է, որ մաս-մաս է կառուցված: Հիմ-
նադրը եղել է Լանգ-Թէմուրը: Սա կառուցել
է մի հայկապ չիբի՝ «Կեանք»-Ին-Արաբի:
Գերեզմանի վրա, որը Թուրքեօտանում իսլամը
տարածողներից առաջինը եղաւ:

Այնուհետեւ այս շինութեան կայքին տառի
չափ չիբի-մզկիթներ, որոնք մեծ մասամբ
պատկանում են Թէմուրի ազգականներին եւ
մօտիկներին: Առաջին չիբիին մօտեցնելու հա-
մար հարկաւոր է բարձրանալ բաւական շատ
տանգիւղներով, որովհետեւ շինութիւնը բարձր
է եւ տեղաւորված բլրակի վրա: Բոլոր շինու-
թիւնները կառված են իւրա-հետի եւ գլուխ-
բէյաով, որ 29 սաժէն երկարութիւն ունի:
Հէնց մուտքի կամարի ձախ կողմում դարն-
վում է նորոգումներից բոլորովին անգոյ-
նացած մզկիթ, որից վերեւ կայ բաց աղօթա-
տեղի. իսկ սրա առաջեւում գտնվող բակում
կան մի քանի խօցեր եւ մեղէնէ: Բարձրա-
նալով գալլերէյայով տեսնում ենք դէմ առ դէմ
չորս չիբիներ: Ձախ կողմի առաջին չիբի՝
պատկանում է Թէմուրի քրոջ եւ իր ընտանի-
քին, իսկ միւսը Թիմուրի երկրորդ քրոջ:

Այլ կողմի չիբիներին մէջ ամփոփված են
Թէմուրի աղջկայ եւ նրա առաջին վեզիր Էմիր-
Հասան-Բահադուրի մարմինները: Մի քիչ հե-
ռու գալլերէյայի մէջ ձախ կողմում տեղաւոր-
ված են մօլլաների ընտանիքները, իսկ աջ
կողմում կայ մի փայտեայ քանդակագործ դուռ,
որ դարձեալ կերպով պահպանվել է: Մօլ-
լանների առեւելով, դուռը դարձաւ—հինգ
փայտից է շինված: Այս տեղից ծովիւղով դէպի
աջ, մենք մտնում ենք մի դահլիճ, ուր փոքրիկ

էլ չափ ու սահման չէր դրել Սուլթան
արքայիսկայութիւնը իր յանդիմաններին, ա-
ւելով, թէ դիպարդի վրա պատկեր դնել եւ
ծաղիկներով շրջապատելը ա. եկեղեցու աւանդա-
կան սովորութիւնն է, այլ ի նորոյ ագիտաց-
ներմուծեալ, որոնք չեն հասկանում թէ նման-
ցեալների պատկերութիւնը վերապահվում է
հոգիների տիրոջ: «Երեւք պատանեաց ճառա-
սացութիւնը եւ ձեռ դամբանական ասանա-
բանութիւնը իբրեւ չափազանցութիւն» կարող
էր հաւատաւոր աղօթողներին ձանձրոյթ պատ-
ճառել, իսկ բանիմաց քննադատից՝ արհամար-
հանք:

Հանգուցեալ Աղամեանը, ասում է առաջ-
նորդը, «իբրեւ գեղարուեստագէտ ոք» իրա-
ւունք ունէր գովաբանվել եւ ծաղիկներով զար-
դարվել «ի հրապարակ եւ ի տալիս», քան ի
տանն Աստուծոյ, ուր միայն տառաքինութիւն-
ները եւ բարեգործութիւններն են գովաբան-
վում: Որովհետեւ վախճանվածը դաւանու-
թեամբ հաւմվեալան էր, «հաղիւ ուրեմն ա-
խորժէր ձգել յիւր յիշատակ զճոտ ինկոյց եւ
զճուլ կնդրկաց յեկեղեցու» Հայաստանեայց:
«Մեք դատափետեմք եւ մեղադրեմք զվատ-
թար սովորութիւն վերջին ժամանակաց, որ
ի հաճոյ պատկերասան, անխարական աղաւա-
սութեան եւ անկապաղաւ կեղծաւորութեան
զկրօնական հոգեւոր պաշտամունս ի ծաղիկ եւ
ի ծառակ յեղափոխեաց, զանհաւատիցն ան-
գամ յիշատակ յեկեղեցին Ամենաբարձրոյն
մոծանելով»: Այս բոլորից յետոյ պարզ է, որ մեր գործա-
կալը չէր համաձայնի կաթօլիկ հ. Ալիշանի
համար հոգեհանգիստ կատարել:

- Բ. Հաւորթեանց
- Ղ. Խանդանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասեան յօրեկանական ցուցահանդէսի
զխաւոր գնահատական մասնագիտովը արդէն
վերջացել է իր աշխատանքները եւ մօտ օրե-
րում կը յայտարարէ Էկսպոզիցիաներին նշա-
նակած պարգեւների ցուցակը:

«ԱրժՈՆԱՅԵ» լրագիրը հաղորդում է, թէ
էջմիածնի տիրոջ կարգադրութեամբ, բոլոր
հայ եկեղեցիների երէցիքները այս տարվայ
զեկտեմբերի 1-ից պատկանաւորում են իւրա-
քանչիւր ամիս հաշիւ ներկայացնել իրանց
գործունէութեան մասին այն կօնօրատօրային,
որի իրաւասութեան տակ են գտնվում:

Մենք ստացանք բժշկապետ Յ. Գառապ-
րեանից 25 բուլլի կարծի ուսանողների օգտին:

Դեկտեմբերի 8-ին, ինչպէս արդէն մի ան-
գամ հաղորդել էինք, Թիֆլիսի դատաստանա-
կան պալատում նշանակված է Թիֆլիսի քա-
ղաքային ուղարկվայի նախկին անդամների
գործը, որով նրանք մեղադրվում են իրանց

ու ցածր գրեականների վրա դրված են Ղու-
րանի երկու օրինակները: Մէկը այն Ղուրանի
պատճենն է, որը կարդալիս ապանվել է Թայիֆ
Օսմանը: Սրա իսկականը այժմ պահվում է
Պետերբուրգի կայսերական հասարակական մա-
նենադարանում: Ղուրանների դահլիճից անց
նում ենք մի տեսակի, ուր կախված է մի շատ
հին ջահ, իսկ սենեակի պատեղը զարդարված
են գեղեցիկ ծաղկանկարներով, եւ վերջապէս
այս սենեակից նայված զարադաշի փայտեայ
վանդակի միջով նայում ենք «Պաղարէ» (սուրբ)
Կեանք-Թիւն-Արաբի գերեզմանին: Ասում են,
որ այդ փայտեայ վանդակը բացվում է միայն
10 տարին մի անգամ:

Դուրս գալով այս դահլիճներից, շարունա-
կում ենք մի քանի քայլ բարձրանալ դէպի մի
բացօդեայ կտր շինութիւն, ուր շարված են
ծաղապտիկ մի քանի մօլլաներ եւ հիւրաբո-
րում են այցելուին չամչիլ եւ իրանց ձեռքով
պատրաստած ճաշիկներով, եւ հարկէ՝ փոխա-
րինաբար ստանալով իբրեւ վարձատրութիւն
մի արծաթեայ դրամ: Երեսօթիւնը ունի մի
դուռ, որ տանում է դուրս՝ դէպի հին Աֆրո-
սիսի կարծիքով, այս կտր շինութիւնը եղել է
առաջ «Շահ-Ջանան» զխաւոր մզկիթի:
Վերեւ եւ մի քանի անգամ յիշեցի մօլլանե-
րին: Մօլլաները ապրում են այս շինութիւն-
ների մէջ եւ կանօնաւոր կերպով աղօթք են
անում, իսկ երբ պատանեան են ճառապար-
հորդներ կամ այցելուներ, ամենայն ուրախու-
թեամբ ման են անում, ցոյց տալով ամեն մի
անկիւնը եւ անկող հետաքրքիր պատմու-
թիւնները: Բայց չափազանց խոր տղիւտութիւն

պաշտօնավարութեան ժամանակ կատարած
գեղեցիկների մէջ: Մեղադրվածները այժմ եկել
են Թիֆլիս: Հանգուցեալ քաղաքապետ Ե-
ւանգուլովի ժամանակները պաշտպան են ընտ-
րել երգուեստ հաւատարմատար Չէմէսովին,
ուպրավայի նախկին անդամ իշխան Ա. Մ. Ար-
դութեանին եւ Խ. Վերմիլիսին կը պաշտպա-
նեն՝ առաջինին երգուեստ հաւատարմատար
Տէպէնկօ (Մովկայից), իսկ երկրորդին—եր-
գուեստ հաւատարմատար կրթօթիկ: Ուպրա-
վայի նախկին անդամ Իվանենկօ եւ այժմեան
անդամ Խօթօբով չեն հրաւիրել փաստաբաններ
եւ մտադիր են անձամբ պաշտպանել իրանց
դատարանում:

Երկրագործութեան եւ պետական կառուած-
ների մինիստրութիւնը վճռել է աւելի մեծ
ուշադրութիւն դարձնել Երեսօթի նահանգում
գտնվող Սարգաթաբադի դաշտը ոռոգելու աշ-
խատանքների վրա: Այս նպատակով ասիանդ
է ուղարկված տեխնիկների մի խումբ, որ
գործում է Կովկասեան ջրաբաշխական վար-
չութեան հրահանգների համաձայն: Մտադրու-
թիւն կայ Սարգաթաբադի դաշտը յատկացնել
այն գաղթականներին, որոնք գալու են Ռու-
սաստանի ներքին նահանգներից:

Նոյն լրագիրը հաղորդում է, թէ Կօնկուսի
քահանայ Սրայ թեմական դպրոցական խոր-
հրդին ներկայացրել է մի զեկուցում՝ խնդրե-
լով օրոշում կայացնել, որ վրաց թեմերի եկե-
ղեցական-ծխական ուսումնականներում կրօնի
դասաւորութիւնը կատարվի վրաց լեզուով:
Դպրոցական խորհուրդը օրոշեց ներկայացնել
Կօնկուսի քահանայի զեկուցումը ուսուցիչ օր-
նօրին:

Ինժեներ Տ. Խնփիսեանց, որ ընտրված էր
Թիֆլիսի քաղաքային ուպրավայի անդամ, մօտ
օրերում հաստատվեց այդ պաշտօնում: Կով-
կասեան բարձր իշխանութեան կողմից եւ նո-
յեմբերի 28-ին սկսեց իր պաշտօնավարութիւնը:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են,
որ երկրագործութեան մինիստրութիւնը, չը
ապանկով կանանց գիւղատնտեսական կրթու-
թեան հարցի օրէնսդրական կարգով լուծման,
հարկաւոր համաձայն յայտնի դէպքերում այժմ
եւ եթ թոյլ տալ կանանց տնեղ գիւղատնե-
տեսական դպրոցները, այնպէս որ մինչեւ նոր
կանօնադրութեան մշակումը կանայք կարող
են մտնել գիւղատնտեսական դպրոցները, որ-
պէս պարականկաններն եւ ոչ թէ աշակեր-
տուհիներ: Նրանք կարող են լսել մասնագի-
տական աւարկաները եւ չեն վայելի այդ
դպրոցների տուած իրաւունքները:

ԲՕՏՈՎԻՑ (Դօնի վրա) մեղ գրում են,
«Նոյեմբերի 4-ին, տեղիս կաթօլիկ համայնքի
եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց հայոց
Նահապետ հ. Ղ. Ալիշանի համար: Ներկայ էին

է թագաւորում մօլլաների մէջ: Քիչ է, որ
նրանք բոլորովին գաղափար չունեն պատմու-
թեան անցքերի ճշգրտութեան մասին: Նրանք
շատ եւ շատ անգամ մզկիթների եւ կամ չի-
բիների տակ թաղուածներին եւ կառուցանող-
ների անունները բոլորովին խառնում են: Էլ
չեմ ասում, որ նրանք բոլորովին հասկացո-
ղութիւն չունեն ժամանակագրութեան մասին:
Այստեղ տկամայ յիշում եմ եւ հայոց վանքերի
պահապան-արեղաններին, որոնք «վանահայր»
պատկանելի անուան տակ ապրում են հոշա-
կաւոր վանքերի մէջ եւ շատ անգամ ոչ մի
հասկացողութիւն չունեն իրանց հայ ու պա-
տրապարան տուող մենաստանի մասին: 1894
թ. եւ, ի միջի այլոց, այցելելի եւ մեր Այրի
կամ Գեղարդայ վանքը, որը Երեսօթից, կար-
ծեմ, 30—35 վերտաի վրա է: Այդ տարին այն-
տեղ վանահայր էր Մարկոս թէ Ղուկաս ա-
նունով: Այս արեղանը Այս արեղան անա կատա-
րեալ մեր յիշած մօլլաների տիպիցն էր: Նրա
կարծիքով, վանքը հիմնված է դեռ Լուսաւորչի
օրով, իսկ Լուսաւորչի, ով գիտէ, երբ է ե-
ղել, գուցէ եւ Քրիստոսից առաջ էր ապրել:
Գոնէ յարգելի վանահօր օրերին ո՞նէ էր՝ «եի
սկզբանէ աշխարհի էր այս վանքը, եւ եւ չը
մնայ կանգուն, թէկուզ դուք ոչ մի կօպէլ կը
տաք վանքին եւ վանահօրը»: Դա մէկն էր
չառեղից:

Ուրեմն մեր խորհուրդն է՝ այս գեղեցիկ
հնութիւնները այցելողին—նախ քան այցելելը՝
զինվել պատմական ճիշդ տեղեկութիւններով:
Հիւսիսեցի

կանութեան քաղաքականութիւնը, որ ներքինում հաշիվեց Գերմանիայում, եւ որ յօդուածը դուրս է եկել շատ յարմար ժամանակին, որովհետեւ գերմանական միջնորդները ինքնավարութեամբ պարտաւորեցան յայտարարութիւնները, թէ կալուածատիրական մաքսային նոր տարիքը արգելիչ չի դառնայ մաքսային դաշնագրեր կապելու օտարերկրեայ պետութիւնների հետ, որոնց թուում եւ Ռուսաստանի հետ, սկսեցին հանգստացնել հասարակական կարծիքը, որը պատճառ էր հաւատալու, թէ Գերմանիան կարողացել է համաձայնութեան գալ հարեւանների հետ, Ռուսական միջնորդի հաղորդագրութիւնը բացեց գերմանական հասարակութեան աչքը եւ ապացուցեց, որ բոլորովին անհիմն է այդ ենթադրութիւնը: Լրագրորները ըննադատում են այդ հաղորդագրութիւնը մի շարք յօդուածներով: «National Zeitung» գտնում է, որ միջնորդ Վիտտէի հայեացքը առեւտրական քաղաքական յարաբերութիւնների ապագայ ընթացքի մասին բոլորովին համապատասխան է այստեղի կարծիքի հետ կալուածատիրական տարիքի հետեւանքների վերաբերմամբ: Բանը կարող է եւ չը համեմել մաքսային պատերազմի, բայց ապագայ առեւտրական դաշնագրերը այնքան աւելի ազդատ եւ անբաժանելի կը լինի, որքան աւելի զինուորական կանգնեցնել գերմանական կալուածատերերին: «Vossische Zeitung» գտնում է, թէ ռուսական ֆինանսների միջնորդը նոյնքան թիչ հակված է համբերող գտնունքի խաղալու, որքան եւ առեւտրական միջնորդ-հաւաքող Ֆոն-Կէրբերը: Լրագրորը չէ համոզուում, թէ ինչպէս լուրջ քաղաքական գործիչը կարող է յոյս ունենալ, որ Ռուսաստանը չի զրկի Գերմանիային արդիւնաբերական առարկաների նուազեցրած մաքսից, եթէ Գերմանիան կը զրկէ Ռուսաստանին հացի պակասեցրած մաքսից: «Berliner Tageblatt» նկատում է, թէ ռուսական ֆինանսների միջնորդը հեռուում է անպայման ուղիղ տեսակէտի: Գերմանիայի եւ Ռուսաստանի առեւտրական-քաղաքական շահերը պէտք է ընթանան ձեռք ձեռքի տուած, եթէ երկու երկրին էլ ցանկանում են փոխադարձ շահեր ստանալ համաձայն իրանց անտեսական առանձնապատկերներին: Գերմանիան ոչինչ չի չափի ամենաանողնաւորման հասարակ իրաւունքից, որովհետեւ Ռուսաստանը ուրիշ երկրների վերաբերմամբ մի առանձին պատճառ չունի նուազեցնելու արդիւնաբերական առարկաների մաքսադրու: «Frankfurter Zeitung» երկրորդ է յայտնում, որ եթէ Ռուսաստանը, ինչպէս նախորդ շաբաթ Աւստրիան եւ Իտալիան հետեւեն Գերմանիայի օրինակին, այն ժամանակ տեղի կունենայ մաքսադրների ընդհանուր բարձրացում, որ պարանքների փոխանակութեան համար նոր արգելքներ կառաջացնէ: «Berliner Neueste Nachrichten» պատմում է ռուսական փոխտէի առաջարկած ամենամեծ հովանաւորումով, բայց կարծում է, որ եթէ բարի ցանկութիւն լինի փոխադարձաբար յարմարեցնելու մաքսադրներ երկու երկրների առեւտրական յարաբերութիւններին եւ գտնելու modus vivendi, որ հաշտեցնէր տարբեր երկրների շահերը, հասարակ կը լինի կապել Ռուսաստանի եւ Գերմանիայի մէջ իսկական տարեկան դաշնագիր: «Post» համարում է ֆինանսների միջնորդի հաղորդագրութիւնը մի ապացույց, որ Ռուսաստանը հացի բարձրացրած մաքսադրների պատճառով մաքսային պատերազմ չի սկսի Գերմանիայի դէմ, որ նրա համար կարեւոր է ոչ գերմանական մաքսադրների բացարձակ չափը, այլ միայն երաշխաւորութիւնը, որ մաքսադրը չի գործ զրկի ռուսական արդիւնքների վերաբերմամբ աւելի բարձր չափով, քան միւս երկրների արդիւնքների վերաբերմամբ եւ որ այդ երաշխաւորութեան համար, երեւի, վերջի վերջոյ Ռուսաստանը կը համաձայնի Գերմանիայի հետ կապված դաշնագրում նուազեցնել գերմանական արդիւնաբերական առարկաների վրա դրած իր մաքսադրները: «Deutsche Tages Zeitung», բոլոր կալուածատերերի օրգանը, գտն է, որ ռուսական յօդուածը զրկում է խաղաղասիրական ոգով եւ մաքսային պատերազմ չէ սպասում, բայց այդ լրագրորը, հաւատարիմ մնալով իր կուսակցութեան աւանդութիւններին, իսկոյն եւ եթէ ինչ-նախադասութեամբ հաւատացնում է, թէ Գերմանիայի դիրքը աւելի զօրեղ է Ռուսաստանից, որը, իբր թէ, չը գիտէ թէ ինչ անէ իր հացի աւելորդ քանակութիւնը եւ թէ այդ պատճառով, երեւի, Գերմանիան չի ցանկանայ բաւականապէս միայն ամենամեծ հովանաւորման իրաւունքով: Պահանջողական «Kreuz-Zeitung» լրագրորը ուրախութիւն է յայտնում, որ ֆինանսների միջնորդը Վիտտէ չարունակում է մնալ նոյն պետական անձը, որ գիտէ շատ խելացի եւ եռանդուն կերպով պաշտպանել իր երկրի շահերը, չը հրապարակելով ոչ մի թէո-րիայով: «Vorwärts», սոցիալ-դեմոկրատների օրգանը, Վիտտէի հաղորդագրութեան մէջ տեսնում է մի պարզ ապացույց, որ մի երկրի ազգային ետականութեանը սահման է դրվում մի ուրիշ երկրի ազգային ետականութեամբ: Լրագրորը գտն է այն բանից, որ ամեն անգամ, երբ այստեղ սկսում են լուրեր տարածվել իբր տեղի ունեցած համաձայնութեան մասին Ռուսաստանի եւ Գերմանիայի մէջ հացի մաքսադրների աւելացման մասին, միջնորդը Վիտտէ իսկոյն սառն ջուր է ածում լուրերին հաւատացողներին վրա:

ԲԵՐԼԻՆ. Բէյլաւադ: Խոշոր կալուածատերերի պարագլուխ Կանից ուղարկութիւն է հրաւիրում այն վտանգի վրա, որ սպասում է Ամերիկայի հետգնեւած ամուսնացողներին: Անցնելով ապա առեւտրական դաշնագրերի հարցին, ճառարարը ասում է, թէ ռուս-գերմանական դաշնագրերը այն դաշնագրերի օրինակելի տրպարն է, որոնք ծառայում են Ռուսաստանի օգտին: Երկրագործութեան պաշտպանութիւնը կենսական հարց է պետութեան համար: Սոցիալ-դեմոկրատ Զինգեր խիստ ռոճով յարձակվում է հացահատիկների մաքսի աւելացման վրա, անուանելով այդ բանը հացի վաշխառութիւն: Կ. ՊՈԼԻՍ. Սուլթանը ուղարկեց Զինգերին ի իշատակ նրա յօդուածի մէջ աղանդականութիւնը զարգացնելու մի օսկեայ ընծայ հետեւեայ բովանդակութեան մակագրով: «Այս ընծան մատուցված է նորին կայսերական մեծութիւնից Զինգերին, ի իշատակ նրա դիպլոմատիական գործունէութեան յիշատակելի» եւ ի նշան նրա ջանքերի՝ բարեկամական եւ լաւ-հարեւանական յարաբերութիւնների հաստատելու երկու պետութիւնների մէջ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. «Правительственный Вестник»-ում տպագրված է. «Թիֆլիսի քաղաքային դրամարկղից այս տարվայ սեպտեմբերի 28-ին գողացված են Թիֆլիս քաղաքի 3-րդ փոխառութիւնից մնացած օրիգինալները 592,000 ռուբլի գումարի Թիֆլիսի քաղաքային պաշտօնակատարի խնդրով, կրեդիտային մասի առանձին դիւանատունը հաղորդում է ի տեղեկութիւն ամենքի, թէ Թիֆլիս քաղաքի 3-րդ փոխառութեան օրիգինալները կը փոխարինվեն նոյն փոխառութեան նոր ձեւի օրիգինալներով, այս պատճառով այդ օրիգինալներն ունեցող անձինք հրաւիրվում են ներկայացնել նրանց Թիֆլիսի քաղաքային ուղարկային, որոնց փոխարին նրանց կը տրվեն ժամանակաւոր անդորրագրեր, մինչեւ նոր օրիգինալների պատրաստելը: Թիֆլիս քաղաքի 3-րդ փոխառութեան նոր օրիգինալները տրուել ժամանակի մասին կը յայտարարվի առանձին»:

Յաւադէր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ Հրատարակչներ՝ ԹԱԳՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻԲ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՐԱՆՈՅ“

Ձաք. Գրեգորեանցի հրատարակութեամբ լոյս տեսան

1) Աճը-Ջիւլիանոս—Առման եւ Ձէյլա-նիս նոր հէքթաթը Գինն է 25 Կ.

2) Կարմէն-Սիւլվա—Ալէքս. Գ. 10 Կ. Գումարով գնողներին 20% զեղչ կը լինի: 1—2

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱԲԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

արանով յայտարարում է, որ նրա դիւանատանը, դեկտեմբերի 1-ին, ցերեկվայ ժամը 12-ին, նշանակված է ամուսնի կապով տարուել Բե-տանի կուլուղի շինութիւնը Տառնանիսկայա փողոցում այժմ գոյութիւն ունեցողից սկսած մինչեւ իշխան Թումանովի տունը նոյն փողոցում: Կուլուղիի քանակը պէտք է լինի 68,00 պաղ. սաթէն, 18x12 վերջով կարուստեղով Աշխատանքի արժէքը կը լինի 1500 ռ. Աւուրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը Ուղարկայի շինարարական բաժնում բոլոր լի օրերը, ժամը 9-ից մինչեւ 3-ը: 2—3

ՈՍԿԵԳՈՅԵ ԵՒ ԱՆՈՒՇԱՀՈՏ

ՄԵՂՐ

Ա. ՄԻԹԱՐԵԱՆԻ ՄԵՂՈՒՆՈՑԻՑ

Մախվում է Լեւոնաւոյան փողոցում, Տէր-Միքայէլեանի № 3 տանը, Արաւ-Արաւայա հրապարակի մօտ, մուտքը գաւթից: Բարձրա-նալ ձախակողմեան վերնայարկը: Մեղրի պուզը—9 ռուբլի, ֆուստը—25 կոպէկ, Առաւօտ, ժամը 8-ից մինչեւ 11-ը, Երեկոյ. ժամը 4—ից մինչեւ 7-ը:

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱԲԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

արանով յայտարարում է, որ նրա դիւանատանը 1901 թւականի նոյեմբերի 30-ին, ցերեկ-վայ ժամը 12-ին, նշանակված է ամուսնի կա-պով տարուել Գալստիկայա փողոցը ամբողջ-վին քարայրատակելու աշխատանքը 597,31 քա-տակուսի սաթէն քանակութեամբ, 2608 ռ. 11 կոպ. գումարի: Աւուրդին մասնակցել ցանկա-ցողները կարող են տեսնել պայմանագիրը Ուղ-րարայի շինարարական բաժնում: Բոլոր լի օրերը, ժամը 9-ից մինչեւ 3-ը:

3—3

Арматовская сареника
НА ЛЬТО 1902.

ИЗЯЩНАЯ ЛЕТНЯЯ ТКАНЬ
ДЛЯ ПЛАТЬЕВ И БИЛЬЕ

ОБРАЗЦЫ 265 РИС. ВЪ АЛБЮМѢ

ВЫСЫЛАЮТСЯ БЕЗПЛАТНО.

ФАБРИКАНТЫ

ТОРГОВЫЙ ДОМЪ

А. БЕНДЕРЪ И С. ВЪЯ

МОСКВА, ИЛЬИНКА.

ПРОДАЖА ОПОТЪМЪ ВЪ РОЗНИЦУ.

1—3

ԹԵՅԻ ԱՌԵԻՏՈՒՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Վ. ՎԻՍՈՑԿԻ ԵՒ ԸՆԿ.

ՄՈՍԿՎԱՅԻՆ

Բաժանմունքը Թիֆլիսում—Մեծ ԳՄԱՆ, Երկաթագնացների փողոց, տէլեֆոն № 482. Նորին Մեծութիւն Գարսի Շահի պալատի մատակարարներ:

Հիմնական դրամագումարն է 6,000,000:

Առեւտրի տարեկան շրջանառութիւնը—20,000,000:

Շնորհիւ մեր թէյերի բարձր յատկութեան, որոնք առանձնապէս նշանաւոր են իրանց զօրեղ հոտով, ընտրել համով եւ մուգ գոյնով, մեր առեւտրական տունը գրաւել է Եւրոպայում առաջին տեղերից մէկը իր ծախած թէյի քանակութեամբ:

Մեր խանութներում, որոնք գտնվում են Մոսկվայում եւ Օդեսայում, սեփական շինութիւնների մէջ, պարագում են աւելի քան 1500 հոգի:

Մեր առեւտրական տան թէյերը ծախվում են Ռուսաստանի բոլոր լուսաւոյն խանութներում:

Մեր թէյերն առնելու ժամանակ խնդրում ենք պ.պ. գնող-ներին ուղարկութիւն դարձնել մեր առեւտրական նշանի ճշգ-րութեան վրա, —նաւ,—որ հաստատված է կառավարութիւնից եւ պաշտնջել Վիսոցկու թէյերը նախ նշանով:

Ընկերութեան Վարչութիւնը գտնվում է Մոսկվայում, բաժանմունքները՝ Օդեսայում, Վարչակայում, Բոտովում Դոնի վրա, Եկատերինբուր-գում, Խարկովում, Թիֆլիսում, Բիւլայում Վիլնյայում եւ Սիմֆերոպոլում:

Ընկերութեան հասցէն թէ Մոսկվայի եւ թէ բաժանմունքների համար—Товарищество чайной торговли В. Высоцкий и Ко.

9—10

Կ օ ճ ֆ է տ ի ե լ Ե օ Կ օ Ղ ա դ ի

գ ո ռ ծ ա ռ ա լ

„Փ. Ն. ՓՐԻԴՈՆԵԱՆ“

ԹԻՖԼԻՍԻՄ

Առաջարկում է թարմ կարամէլ մրգե-ղէնից, մօնպանսէ, մարմէլադ, պաստիլա, գէֆիր եւ այլն:

Պատուէրներով դիմել գործարան. Պալ-լովսկայա փողոց, սեփական տուն, տէլե-ֆոն № 362.

Սեփական գործարանական խանութը գտնվում է Մէյդանում, եղբ. Հէյուրեանների տանը, տէլեֆոն № 772.

Մեր ապրանքները ծախվում են բոլոր կօյունիական խանութներում:

Բազուր եւ Բազուրի գաւառի համար ներկայացուցիչ է Նիկ. Սամարչեանց, Մի-բայէլեան փող., տ. Աշուճեանի:

97—100